№ 32 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ 27 ՕԳՈՍՏՈՍԻ 1894 № 32

ԱՓԱՋԻՆ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

ԱՓԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ" ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինը 40 ղրուն, կէս տարուանը 6 ղրուն: Ուռանմին համարներդ 5 շահի. Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 ռուբլի կէս տարուան 5 Ֆր. կամ 2 ռուբլի: Թէհրանում գրւում են միմիայն, խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran Rédaction ÇHAVIGH.

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը՝ Կիւրակէ եւ տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 1 շահի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր եկեղեցական երեսփոխանները.—ՆՈՐԻՒՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակներ խմբագրութեան. ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Բաքուից. Նամակ Պ.ամորլուից. Արտաքին լուրեր.—Բանաստիրական. Ահա Թէ ինչպիսի կրօնաւորներ ունինք.—Յայտարարութիւններ:

ՄԵՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐԸ

„Շաւղի" 28 թուի մէջ խօսելով Թէհրանի ս. Բարգաւաճիմէոս եկեղեցու կալուածների մասին՝ մենք շօշափել էինք մի հարց՝ որ աւելի պարզաբանուելու կարօտ է: Այդ մեր եկեղեցական երեսփոխանների խնդիրն է:

Ամեն ուրիշ քաղաքներում հայոց եկեղեցիները ոչ միայն ունին կանոնաւոր ծախսերի մատակարարում, այլ և միշտ ունին հասոյթի մի յաւելում որ սովորաբար գործ է դրւում որպէս նպաստ տեղական դպրոցներին:

Թէհրանի մէջ ոչ միայն եկեղեցիները չեն օգնում վարժարաններին, այլ և միշտ անտուկը այնչափ դատարկ է լինում, որ երբ հարկաւոր է ամենափոքր արտաքոյ կարգի մի ծախք տնել, դիմում են հանգանակութեան: Եկեղեցին կանոնաւոր եկամուտ չունի, հասարակութիւնը նեղանում է և պահանջում է որ այդ ծախքն էլ ուսումնարանը յանձն առնէ՝ և մի երգեցողութեան ուսուցիչ հրաւիրէ:

Գալիս է մի առաջնորդ, մի վարդապետ, որին պէտք է հիւրընկալել. շատ մի հանգանակութեան թերթ, և դռնէ դուռ հաւաքւում է մի քանի երեսուն թուման, տրտունջներով և անէծքներով համեմած:

Հարկաւոր է լինում խարխուլ շէնքը մի քիչ նորոգել, անտուկը դատարկ է, հանգանակութեան թերթը պտտում է:

Գալիս է մի պանդուխտ տգէտ գիւղացի, որին կարելի է մի չնչին գումարով գոհացնել. քահանան տալիս է ստորագրութեան մի թերթ նորա ձեռքը և հանգանակութիւն է սկսւում:

Մինչդեռ մենք վստահ ենք որ այդ եկեղեցիները կառավարուելով քիչ շատ կանոնաւոր երեսփոխանների ձեռքով, ոչ միայն կարող կը լինէին բաւականանալ իւրեանց սովորական ծախքերին, հայթայթել մի երգեցողութեան ուսուցչի վարձ, այլ և կարող էին ամեն տարի աւելացնել մի որոշ գումար կամ եկեղեցու համար մի ֆոնդ կազմելու, կամ դպրոցներին օգնելու համար:

Բայց մեր եկեղեցիները չունին օրինաւոր երեսփոխանական ընտրութիւններ, և այսօր ամեն մարդ իրան հեռու է պահում եկեղեցու երեսփոխան ընտրուելուց. հողմը այսօր դէպի վարժարանական հոգաբարձութիւնն է փչում: Ոչ մի գործիչ որ վայելում է քիչ շատ ժողովրդականութիւն, որ ունի եռանդ, ընդունակութիւն չէ համաձայնւում եկեղեցու երեսփոխան լինել: Միւս կողմից ով որ մի անգամ երեսփոխան է լինում, իրան իրաւունք է համարում անվերջ շարունակել իւր պաշտօնը, առանց կանոնաւոր հաշիւ տալու, առանց ջանքեր անելու որ մի կերպով եկեղեցու հասոյթները աւելացնէ:

Օրինակ մինչև այսօր՝ հակառակ ս. եպիսկոպոսի հրամաններին դեռ ևս եկեղեցիները չունին ծախու մեղրամոմ, այլ իրանք էլ գնում են շուկայից սպիտակ մոմեր, և ով որ կամք ունի մի մոմ վառել եկեղեցու մէջ, պէտք է մի ծրար մոմ առնէ և իւր հետ բերէ եկեղեցին. մինչդեռ մոմավաճառութիւնը այնքան եկեղեցիների համար մեծ շահու աղբիւր է:

Եկեղեցական երեսփոխանների ընտրութեան համար, ինչպէս բոլոր այլ հասարակութեանց համար, չը կայ որոշ կանոնադրութիւն: Թէ հոգևոր իշխանութիւնը նշանակած աշակերտուհիներին մէջ ընկնում է շփոթութիւն եւ իրարանցում սրանցից մէկը կանգնում է եւ ասում, „Տէր հայր, այդ ինչ էր տուել, որ քննութեան ժամանակ պատմեմ" իսկ Նորդարեան Նունէն, որ բոլորովին չէր սովորել տէր հօր առաջարկած նոր գլուխը, արտունջ է յայտնում քննութեան ժամանակ հանդիսականների առաջ, ասելով;

—Տէր հայր, ինչ այդ չէք տուել, որ քննութեան ժամանակ պատմեմ. ինչ տուել էք պատմելու „Հոգեպալուստը".

Հանդիսականների մէջ դարձեալ բարձրանում է բարձրաձայն ծիծաղ: Կրօնուսոյցը եւս ծիծաղում է, կարծելով, թէ հանդիսականները ոչ թէ իւր վերայ են ծիծաղում, այլ աշակերտուհու վերայ:

Կանչում են մի այլ աշակերտուհու, այժմ աշակերտուհին է մոռանում, թէ տէր հայրը իրան նախապէս ինչ յօդուած էր տուել պատմելու, փնտրում է մի այլ գլուխ պատմել, նստած աշակերտուհիներին մէջ կրկին շփոթութիւն է ընկնում. „այդ չէ, այդ չէ" բարձրաձայն սկսում են գանգատուիլ. իսկ պատմող աշակերտուհին լսելով դրա բողոքը, բացականչում է զարմացած:

—Վա՛յ, տէր հայր, սխալուեցայ, այդ չէ, դուք ինչ տուիք „Քրիստոսի ծնունդը", որ քննութեան ժամանակ պատմեմ:

Հանդիսականների ծիծաղը այն աստիճանի է հասնում, որ շատերն իրանց ծիծաղը զսպելու համար դուրս են գնում:

—Ինչ բան է Պարթեւ, հարցնում է ս. Մուրճեանը մի աշակերտուհու:

Այդ հարցի ժամանակ աշակերտուհին ժպտում է եւ լռում, իսկ միւս աշակերտուհիների մէջ ընկնում է իրարանցում եւ ծիծաղ:

—Այդ միայն պատմել եմ. բայց իրրեւ դաս չեն սովորել, մինչեւ անգամ իմ անցած ծրագրի մէջ էլ չը կայ, աշակերտուհու փոխարէն ընդմիջում է կրօնուսոյցը:

Վարդապետը նայում է ծրագրին եւ տեսնելով, որ իրօք ծրագրի մէջ չը կայ „Սպիտակ Պարթեւի" մասին, նկատում է ուսուցչին:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՀԱ ԹԷ ԻՆՉՊԻՍԻ ԿՐՕՆՈՒՍՈՅՑՆԵՐ ՈՒՆԻՆՔ

(Պատմուած դէպքեր)

(Շարունակութիւն եւ վերջ)

—

—Ինչպէս եմ Զատկին գնայ՝ եկեղեցի հօ կիմանայիր, ասաւմ է կրօնուսոյցը:

—Մարդիրոսեան Սիրանոյշ, Մաղկազարդին երբ Քրիստոսը Երուսաղէմի պատարը մտաւ, այնտեղ ինչ էին ծախում:

—Այնտեղ իշաններ էին ծախում, տրատրիսանում է աշակերտուհին ձգնարձակօրէն:

Հանդիսականների մէջ սաստիկ հոհոց է բարձրանում:

—Նորդարեան Նունէ, կանչում է կրօնուսոյցը: Այդ աշակերտուհին յայտնի է՝ ամբողջ դասատան մէջ իւր լկտիութեամբ եւ յստակամտութեամբ:

—Պատմիր „Քրիստոսի յարութիւնը" ասում է կրօնուսոյցը:

նութիւնը այս մասին ինչ հրահանգներ է տուած, այդ մեզ անյայտ է, մենք այնքան գիտենք որ Թէհրանի մէջ բոլոր ազգային հաստատութիւնների մէջ ամենից վատ կառավարուածը, եկեղեցիներն են։

Այս էլ մի նոր փաստ է այն իրողութեան, որ պարսկահայերի մէջ ամեն հաստատութիւնները մատնուած են քայքայման, շնորհիւ որոշ կանոնադրութեանց բացակայութեանը, հոգևոր իշխանութեանց անհոգութեանը եղած քիչ շատ կանոններն ևս գործադրելու, իրողութիւն որի վերայ „Շաւիղը“ քանիցս ուշադրութիւն է հրաւիրել։

Չը գիտենք ինչ եղաւ այն մանրամասնն կանոնադրութիւնը որ Էջմիածնի իշխանութիւնը խոստացել էր ուղարկել պարսկահայերի համար։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թէհրան 23 օգոստոսի 1894

Հաճեցէք տեղ տալ ձեր թերթում, եթէ արժան կը դատէք հետևեալը, որը թէև պատիւ չէ բերում մեր հոգևորականութեան և նոյն իսկ գիտեմ որ գըրուածիս համար էլ շատ թշնամիներ պիտի գտնեմ, սակայն աւելի լաւ համարեցի թշնամիներ ունենալ քան թէ այսպիսի դէպքերում լռել։ Աստուածածնի յաջորդ կիրակի օրը ծանօթներիցս մէկի հետ, գնացինք Ղազվինու թաղի ս. Գէորգայ եկեղեցին. եկեղեցին համարեա դատարկ էր և հազիւ թէ 6—7 մարդիկ լինէին։

Պատարագի արարողութիւնը վերջանալու վերայ էր և դպիրները ուզում էին երգել „Հայր մերը“ երբ արժ. պատարագիչ քահանան դարձաւ դէպի ժողովուրդը և սկսեց քարոզել որ, հազուագիւտ է մեր եկեղեցիներում։

Քարոզը մօտաւորապէս հետևեալն էր։

„Անցած կիրակի օրը Աստուածամօր տօնն էր, իմ պարտականութիւնս էր որ ձեզ քարոզէի, բայց չը յաջողուեց, ես ուզում եմ անցած շաբաթուայ պարտականութիւնս այսօր կատարել։

Անցած կիրակի մեր Աստուածամօր տօնն էր. Թէհրանում մօտ 300 տուն հայ կայ բայց եկեղեցում հազիւ թէ 20 տուն կը լիներ...։

Մենք աշխարհիս երեսին ունինք մի սուրբ անարատ հաւատ որ ոչ ոք չունի, աշխարհում 3 առաքելական եկեղեցի կայ հռովմայեցւոց, յունաց և մերը, բայց ամենասուրբը մերն է, մենք ունինք եկեղեցու եօթը խորհուրդները, որոնք են ամուսնութիւն, մկրտութիւն և այլն և այլն.... (այդ միջոցին արժ. քահանան ձեռքերը երկարացնելով մատների վերայ սկսեց մէկ մէկ թուել առաքելական եկեղեցու 7 խորհուրդները և ապա բազդատել միւսների հետ)։ Ամուսնութիւնն որ կայ ուրիշ եկեղեցիներում ընդունում են իբրև մի դաշին. երբ ուզում են ամուսնանում են իսկ երբ չէ մէկը դէսը նա գնում մէկը դէնը, բայց մերը այդպէս չէ։

Մկրտութիւնը, ուրիշները մի քիչ ջուր են շաղ տալիս (սրսկում) երեխի երեսին և ըստով պոծնումայ, նրանք չունին մեզ պէս սուրբ մկրտութեան աւազան, սուրբ մեռոն և այլն ես նրանցը չեմ ընդունել, այս ասելով արժ. քահանան բարկութեամբ ձեռքով իբրև չընդունելու մի բացասական նշան է անում։

Մեր Թէհրանի ժողովուրդը ժամ չի գալիս չի աղօթում այսպէս սուրբ եկեղեցում որ ոչ մէկ ազգ չունի, իսկ երբ էլ գալիս են մաշիկով են ներս մտնում, ասում են թէ մենք ինգլիզէվար, ֆրանսէվար ենք իմանում պէտք է իրար հետ ինգլիզէվար խօսենք նորա համար որ չենք հասկանում ժամանակը։“

Այ քեզ զարմանալի քարոզ մեր հովուի կարծիքով Քրիստոնէութիւնը, Աստուածավախութիւնը և Աստուածճանաչութիւնը գտնուում է միայն կօշիկ հանելու մէջ շարունակ ծունր դնելու մէջ և այլն, իսկ եթէ մէկը այդ բանը չանէ նա արժան չէ երբէք առաքելական սուրբ եկեղեցւոյն հարազատ կոչուելու, և փոխանակ ս. Աստուածածնի վերափոխումը քարոզելու, հասկացնելու ժողովրդին թէ՝ ինչու է այդ օրը տօնւում Հայաստանեայց առաքելական եկեղեցիներում, թէ ինչու է այդ օրը որբդութեամբ պահւում. արժ. քահանան յարմար է դատել Աստուածամայրը թողուլ և մի քանի կիսկտուր խօսքերից յետոյ կպչել կօշիկների, ֆրանսերէն կամ անգլիերէն խօսելու վնաս չունի. մենք այնքան էլ ուշադրութեան չէինք առնել այդ, եթէ ինքն էլ նոյն օրը արարողութեանց մի անյարմարութեան տեղի չը տար։ Արժ. հովիւը ինչու իւր քարոզելու ժամանակ թոյլ է տալիս իւր պաշտօնակցին կատարել մի այլ արարողութիւն—մկրտութիւն։ Չէ՞ որ տարբեր արարողութիւնները կարող են խանգարել միմեանց և մէկը միւսին ազդեցութիւնը չէզոքացնել։ Կօշիկներով եկեղեցի ներս մտնելը աւելի մեղք է և անյարմար թէ եկեղեցական երկու արարողութիւնների մէկը միւսի խանգարելը։

Գանք մեր խնդրին։

Հարց է, թէ այդ ինչ զարմանալի կօշիկներ են որ այդքան հետաքրքրում են Թէհրանի մեր եկեղեցականներին։ Վաղ դապետ է դալիս (հանգ. խաչատուր վարպետը) և ուզում է քարոզել իսկոյն յարներին ասելով։

—Սրանք հայերէն լաւ կարդալ չը գիտին, ուստի կրօն չեն կարողանում սովորել, որովհետև կրօնը կապ ունենալով հայոց լեզուի հետ կարդալով պէտք է սովորեն։

Բացի դրանից սրանք եթէ լաւ ընտանիքից լինէին, այս բոլոր պատմութիւնները տանը սէտք է սովորած լինէին։

—Եթէ աշակերտուհիները տանը սովորած լինէին, այն ժամանակ մեզ մօտ այլ եւս չէին ուղարկել իրանց ծնողները, նկատում է աւագ վարժուհի տիկին Ցայտնեանը։

Հարցաքննութիւնը վերջանում է, հանդիսականները տխուր տպաւորութեան տակ հեռանում են, աշակերտները ցրւում են, իսկ կրօնուսոյցը լիովին խայտառակուած վերջին տրտունջ է յայտնում ուսուցիչներին, թէ՝

—„Ինչ հարկաւոր էր, որ հարցաքննութեան ժամանակ այդքան բաղմութիւն էիք հաւաքել, անդալխանայ հօ չէ ուսումնարանը“, այս ասելուց յետոյ հեռանում է դպրոցից, սիրտը վրէժխնդրութեան կրակով լցուած։

Ինչ էր կարծում ընթերցող, գալիս է հետեւեալ ուսումնական տարին և չը նայելով վերոյիշեալ խայտառակ ժողովի արձանագրութեանը *) որ ուղարկւում է ուր հարկն է, բայց ոչ գործի քննութիւն լինում եւ ոչ էլ հոգևոր իշխանութիւնն է ուշադրութիւն դարձնում այդպիսի կրօնուսոյցի վերայ, այլ դրա փոխարէն սոյն կրօնուսոյցի մանկանաւագ թեանց շնորհիւ նոյն երկսեռ դպրոցի ուսուցիչներից եւ ուսուցչուհիներից շատերը յայտարարւում են իբրև խռովարարներ, որովհետև դրանք համարձակուել են կրօնուսոյցի ապիտութիւնը երեւանհանել եւ հեռացւում են դպրոցից, իսկ կրօնուսոյցը կրկին անշարժ մնում է իւր տեղը, կրկին սկսում է իւր գործունէութիւնը խեղճ մանուկ սերնդի վերայ գործ դնել։

Վերոյիշեալ բոլոր դէպքերը պատահել են 1890—92 եւ 92—93 ուսումնական տարուայ ընթացքում։

Դաւիթ Տէր-Դաւիթեանց

Թիֆլիս

—Դուք իրաւունք չունիք այնպիսի հարցեր առաջարկելու, որ ծրագրի մէջ չը կան։

“—Ինչ է նշանակում „ղնաց մեր հանապազորդտուր մեղ այսօր“, հարցնում է հոգաբարձուն աշակերտուհիներից մէկին։

Այդ բանըտէրտէրները չը գիտեն երեխան հրտնդից կիմանայ, երեխայի փոխարէն պատասխանում է կրօնուսոյցը ժպտալով։

Այդպիսի հիանալի հանդիսով վերջանում է կրօնի հարցաքննութիւնը, վարդապետը շնորհակալութիւն է յայտնում տէր հօրը, որ այդպէս լաւ է պարապել, օրհնում է ամենքին եւ գնում է։ Կրօնուսոյցը խրախուսուած վարդապետի յայտնած շնորհակալութիւնից եւ գովասանքից, ծանաքոտ գրիչը եւ հարցաքննական թերթ ձեռքին շտապում վարդապետի ետեւից եւ խնդրում է նորան հարցաքննական թերթի վերայ նշանակել թուանշաններ եւ ստորագրել, որ ներկայ է եղել քննութեանը, բայց վարդապետը չի համաձայնում եւ շտապով հեռանում է դպրոցից։

Կրօնուսոյցը ճանապարհ ծգելով վարդապետին մինչեւ դպրոցի քաղը, յետ է դառնում եւ իրան արդարացնելու համար մեղադրում է աշակերտուհիներին ասելով։

—Սրանք հայերէն լաւ կարդալ չը գիտին, ուստի կրօն չեն կարողանում սովորել, որովհետև կրօնը կապ ունենալով հայոց լեզուի հետ կարդալով պէտք է սովորեն։

Բացի դրանից սրանք եթէ լաւ ընտանիքից լինէին, այս բոլոր պատմութիւնները տանը սէտք է սովորած լինէին։

—Եթէ աշակերտուհիները տանը սովորած լինէին, այն ժամանակ մեզ մօտ այլ եւս չէին ուղարկել իրանց ծնողները, նկատում է աւագ վարժուհի տիկին Ցայտնեանը։

Հարցաքննութիւնը վերջանում է, հանդիսականները տխուր տպաւորութեան տակ հեռանում են, աշակերտները ցրւում են, իսկ կրօնուսոյցը լիովին խայտառակուած վերջին տրտունջ է յայտնում ուսուցիչներին, թէ՝

—„Ինչ հարկաւոր էր, որ հարցաքննութեան ժամանակ այդքան բաղմութիւն էիք հաւաքել, անդալխանայ հօ չէ ուսումնարանը“, այս ասելուց յետոյ հեռանում է դպրոցից, սիրտը վրէժխնդրութեան կրակով լցուած։

Ինչ էր կարծում ընթերցող, գալիս է հետեւեալ ուսումնական տարին եւ չը նայելով վերոյիշեալ խայտառակ ժողովի արձանագրութեանը *) որ ուղարկւում է ուր հարկն է, բայց ոչ գործի քննութիւն լինում եւ ոչ էլ հոգևոր իշխանութիւնն է ուշադրութիւն դարձնում այդպիսի կրօնուսոյցի վերայ, այլ դրա փոխարէն սոյն կրօնուսոյցի մանկանաւագ թեանց շնորհիւ նոյն երկսեռ դպրոցի ուսուցիչներից եւ ուսուցչուհիներից շատերը յայտարարւում են իբրև խռովարարներ, որովհետև դրանք համարձակուել են կրօնուսոյցի ապիտութիւնը երեւանհանել եւ հեռացւում են դպրոցից, իսկ կրօնուսոյցը կրկին անշարժ մնում է իւր տեղը, կրկին սկսում է իւր գործունէութիւնը խեղճ մանուկ սերնդի վերայ գործ դնել։

Վերոյիշեալ բոլոր դէպքերը պատահել են 1890—92 եւ 92—93 ուսումնական տարուայ ընթացքում։

Դաւիթ Տէր-Դաւիթեանց

Թիֆլիս

*) Այդ արձանագրութեան պատճէնը, ժողովի հետեւեալ օրը կրօնուսոյցը, դպրոցի թղթերից գողացել էր եւ տարել իւր հետ։

Ծ. Ցոդ.

ձակուում է ժողովրդի կոշիկների վերայ, քահանայ է գալիս կոչում է կոշիկների բայց ցաւալին այն է որ այս անգամուայ քարոզը, մեր լուսամիտ և կրթուած կարգեցեալ դասից է, որն ևս մի քանի տարիներ, որպէս ասում են, Հնդկաստանում վիճակ է ունեցել։ Սակայն շատ անգամ էլ պատահում է, որ քահանան իրանից մէկ բան չէ կարողանում քարոզել և նախապէս քարոզելու նիւթը ուրիշներն են նորան տուն տալիս. շատ հաւանական է որ այս անգամ էլ այդպէս պատահած լինի... էլ ինչու ենք դանդատում մենք գիւղացի քահանաներից։ Այսպէս թէ այնպէս էլի լաւ է որ ժողովուրդը բոբիկ չէ գնում այլ կոշիկով է գնում եկեղեցի ապա թէ ոչ երբէք նա բաղդ չը պէտք է ունենար եկեղեցու բեմից քարոզի ձայն լսելու։ Կարծես ժողովուրդն էլ ստար հոգեկան ու մարմնական պէտքեր չունի, կարծես հագար ու մէկ ցաւեր ու վշտեր չունի որ կարօտ լինի մխիթարութեան և հոգատարութեան. կարծես հատարակութիւնը հազար ու մէկ պակասութիւններ ու մոլութիւններ չունի որ կարօտ լինի խրատուելու—ուղղուելու, էլ ոչինչ շահուէտ և նպատաւոր նիւթեր չը կան երիտասարդութեան և հէնց նոյն իսկ ժողովրդեան համար։

Ոչ. թէհրանայ ժողովուրդն էլ ոչինչ պէտք, պակասութիւն չունի. ոչինչ, որ 5—6 տարին մէկ անգամ քարոզի նիւթ դառնայ։ Ժողովուրդը ունի միմիայն.. կոշիկ....

Տիգրան Յովհէփեան

ՂԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

թէհրան 19 օգոստոս 1894

Որչափ ցաւալի է տեսնել Ղազվինի հայ հատարակութեան ազգային ձեռնարկութիւնների արդի խեղճ վիճակը, բոլորը իմիասին արդ ողբում են իրանց դեռ նոր սկսած և շատ վաղ քանդուած խղճալի վարժարանի աւերակները։ Խեղճ վարժարան, այդչափ կարճ կեանք էր սահմանուած քեզ համար. իսկապէս ցաւալի է և շատ։

Քանդել մի վարժարան որը քիչ շատ փայլուն ապագայ էր խոստանում, այդ էլ մի քաջագործութիւն, մի մեծագործութիւն չէ, ընդհակառակը մի մեծագործութիւն կը լիներ այն ժամանակ երբ հանգուցեալի կեանքը վերահաստատելու ջանք կը լիներ բանի դեռ նա կենդանի էր և այն ժամանակ էլ գովելի կը լիներ Ղազվինի հայ հատարակութիւնը։

Կամենում եմ յարգելի ընթերցողներին համառօտ կերպով ծանօթացնել Ղազվինի վարժարանի եթէ (երբէք կրկին ունենան) տարեկան էլ ու մուտքին, ցոյց տալու համար որ շատ դժուար բան չէ այն տեղում մի վարժարան պահել եթէ միայն բարի կամք ունենան։

Ղազվինի վարժարանը պէտք ունի մի հայերէն-ֆրանսերէնի (կամ անգլ.) ուսուցչի որը ֆրանսերէնայ և մի քանի մասնաւոր այլ առարկաներ, մի հատ էլ պարսկերէնի ուսուցչի. էլ ուրիշ ծախքեր չունի՝ ուսուցիչների տարեկան ռոճիկն ու ամեռուայ ծախքերը (որք թեթև են) սեպենք 150 թուման, հաշուելով որ պարսկերէնի ուսուցիչը վարձւում է ամսական 1 թուման և կամ պակաս։ Ցաւոնի է որ Ղազվինում ուսուցանող ուսուցիչն էլ իւր կողմից մի քիչ զոհողութիւն պէտք է անէ, ուստանց որին գրժուար է. ի հարկէ։ Վարժարանական այլ պիտոյքներն արդէն պատրաստ են ինչպէս նաև շէնքը։ Գրքերն աշակերտներին ծախւում են քիչ բացառութեամբ միայն, այսինքն 1—2 ադքատ ընտանքի երեխաներին ձրի են տրւում։ Այսչափ կը լինի Ղազվինի վարժարանի տարեկան ծախքը։

Հիմայ գանք նրա մուտքերին, այդ աղբիւրներից ևս նա զուրկ չէ. օրինակ առաջին տարին հեռաւեալ գումարներն ունեցաւ. աշակերտների տարեկան տուրքը 55 թուման. Ծննդեան տօնի առթիւ մի ֆանդանակութիւնից 154 թուման. բարեսէր ճանապարհորդներից նբեէք (ապառիկներով թէև լաւ չեմ յիշում) մերձ 40 թուման. ամոսական անդամավճարներով ուելի կամ պակաս 40 թուման։ Այնպէս որ սորանց հետ հաշուելով նաև մէկ գրական երեկոյթից մնացած մէկ փոքրիկ գումարը և տարեկան բոլոր ծախքերը վճարելուց յետոյ, վարժարանը ունեցաւ 90 թուման դրամագլուխ. մինչդեռ այդ առաջին տարին լինելով բաւականի շատ ուրիշ ծախքեր էլ ունէր։

Ղազվինում այդ աղբիւրներից մի քանիսը միշտ կան յօգուտ այդ վարժարանի, օրինակի համար աշակերտների տուրքը, անցորդների նուէրները, տարեկան 1—2 թատերական կամ գրական երեկոյթը որից դուրս եկած արդիւնքը ամենամեծ աղբիւրը կարող է կազմել, նայած այն տեղի յարմարութիւններին։

Եթէ թատերական ներկայացումներ տալ դժուար լինի գոնէ վիճակահանութիւններ կը լինին։ Մի՞ւս կողմից եղբարք թուումանեանք խոստանում են 100 թուման նուիրել վարժարանին, որի տոկոսը կարող է լեցնել վարժարանի ծախուց պակասորդը աւելացնելով դորա վերայ առաջին տարուայ մնացորդ 90 թուման տոկոսը եթէ դեռ գոյութիւն ունի նա։

Այս ամենի համար հարկաւոր է ջանք և անխոնջ աշխատութիւն, և այդ միմիայն Ղազվինում ուսուցանող ուսուցիչն է որ պէտք է ջանք ու միջոց գործ դնէ. նա պէտք է այն տեղում գործէ այնպէս որպէս իւր տնում, իւր անձնական գործերի համար։ Հոգաբարձութեան վերայ յոյս դնելով ոչ ինչ կարելի է անել, որովհետև հեգաբարձութեան անդամները գրեթէ բոլորը վաճառականներ են և զբաղուած միշտ իրանց գործերով, ուստի նրանցից այդ բաները պահանջելն ի զուր է։ Իսկ եթէ մի հոգի միայն գործող ունենայ վարժարանը հոգաբարձութիւնն այն ժամանակ ամեն կերպով կաջակցի նորան և կօգնի որով դիւրութեամբ ամեն բան կարգի կը մտնէ։

Բայց թէ ինչու եղածը երկու տարի գոյութիւն ունենալուց (էն էլ երկրորդ տարին 5-6 ամիս միայն) յետոյ փակուեց որովհետև մի քանի անտեղի վէճեր տեղի ունեցան հոգաբարձութեան անդամների միջոն և տեղւոյն ուսուցչի միջև և ամենի թոյնը թափուեց խեղճ վարժարանի վերայ։

Ասասիկ քեզ պատճառ։

Լաւ, հիմայ ինչ պէտք է անել, լինելիքն եղաւ վերջացաւ. այժմ պէտք է խորհել ապագայում յառաջ եկած դժուարութեանց դէմ դնելու։ Մթթէ „այժմ և միշտ և յաւիտեան“ այդպէս պիտի մնայ Ղազվինը, թէ մի օր կրկին պիտի խորհին ղազվինցիք այդ խնդրի վերայ։ Կամ մթթէ Ղազվինն էլ Ղարաղանի նման մի գիւղ է որ իւր հոգսերը թողնէ թէհրանի վերայ։ Անկարելի է այդ, որովհետև եթէ փողն է խնդիրը, Ղազվինի հայերին ճանաչողը լաւ գիտէ որ նրանք առատաձեռն են այդպիսի ցարի գործերում։ Եթէ դժուարութիւնը գործող գտնելու մէջն է այդ էլ շատ դժուար չէ և գտնելուց յետոյ, որովհետև լաւ են ճանաչում զազվինցիներին քաջ գիտեմ որ այս անգամ բոլորն էլ ըրախութեամբ կօգնեն նրան։

Մեր բարեկամ ղազվինցիների ուշադրութիւնն ենք հրաւիրում այս մի քանի կէտերի վերայ յուսալով որ նրանց սրտանեղութիւն պատճառած չենք լինել, սակայն պէտք է խոստովանուիլ որ ղազվինցիքէ մասամբ „հախ“ ունէին, որովհետև եթէ այդպէս չը լինէր նրանք հայ չէին կոչուիլ բառի բուն նշանակութեամբ, մանաւանդ պարսկահայ։ Արդէն թէհրանի Հայկազեան վարժարանն էլ մի միջոց նոյն դրութեան էր մատնուած մինչև կրկին ընկաւ այնպիսի անձանց ձեռքը, որոնք այժմ գործում են իսկապէս վարժարանի ներքին վիճակը բարւոքելու և ոչ անուն վատատակելու։ Եթէ ղազվինցիք էլ կամենան հեռուել այս օրինակին շատ դժուարութիւնների կը հանդիպին

սակայն այսպէս թէ այնպէս յոյս ունինք որ զազգինցի ազգասէր պարոնները շուտով կը ձեռնարկեն վարժարանի վերականգմանը քանի որ ուսումնական տարուայ սկիզբն էլ մօտ է. և այդպիսով կարծում ենք, որ զուրկ չեն մնալ վարժարան կոչուած այդ աստուածային բարիքից և շնորհից այն էլ այս ժամանակում, երբ պարոկահայ բոլոր գիւղերում կրթարաններ են բացւում ինչպէս Ղարաղան, Շուշարին, Քազազ Ալայք։

Ուստի Հրազվինցբնակ պարոններից մի ըստ միսջէ խնդրելով նորանց յորդորում է ուշադրութիւն դարձնել քայ խնդրի վերայ։

Յառաջադիմութիւնը ցանկացող վարդեմի բարեկամ Դ. Ա. Դաւթեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին որ գերապատիւ Եսայի եպիսկոպոսը Հնդկաստան երթալու համար սպասում էր Էջմիածնից խնդրած վարդապետի գալստեանը, որ իւր բացակայութեան ժամանակ պէտք է փոխանորդէր նորան։ Այժմ ուրախութեամբ յայտնում ենք, որպէս հեռագրում է մեր Ռաշտի թղթակիցը, որ արժ. Սահակ վարդապետ Այվատեանն է որ բերում է Եսայի սրբազանի համար և արքեպիսկոպոսութեան կոնդակ։

—

Մեր 28-րդ համարում հրատարակեցինք որ Ն. Կ. Վեհափառութեան թագաւորի եղբայր Ռօքնէդդ-Դովլէն Եսայի սրբազանի հետ տեսակցութեան ժամանակ նուիրեր էր նրան մի զմրուխտ մատանի։ Ամենահաստատ աղբիւրից մենք քաղում ենք, որ նուիրուած մատանին եղել է ադամանդեայ մի շքեղ մատանի և ոչ զմրուխտ։

—

Դավրէժից մեզ հաղորդում են հետեւեալը։ Օգոստոս 13-ին տեղի ունեցաւ „Ընթերցասիրաց“ ընկերութեան երկրորդ ներկայացումը, խաղացին „Սուտ ճգնաւոր“ „Լոլերաք“, „Զարք“, անդրակտներում նուագում էր զինուորական երաժշտական խումբը։ Մուտք սպասւում է 60 թուման՝ որի կէսը պէտք է վերցնէ Բերդաթաղի հոգնաբարձութիւնը իբրև վարձ թատրոնի։ Թատրոնական փոնդի համար իրանց ասելով, ուրեմն իրանց մնում է 30 թ. որից 6 թուման տուել են մուզիկային, 15 թուման էլ ծախս կունենան, մնում է իրանց 9 թ.։

—

Նոյն տեղից մեզ գրում են, որ օգոստ. 11-ին հասաւ Դավրէժ Ղազանի Յովհաննէս վարդապետ Բազունին, որը վերջերս աքսորուած էր Աղթամար, իւր հայերիս հասցրած բարիքների համար ճրագ նելու։ Շատ զարմանալի է թէ վարդապետը ինչպէս է ազատուել և գնացել Էջմիածին, որ տեղ վարդապետը ստացել է ծալկեայ փիլոն և ուղարկուել է մեր աչ առաջնորդի համար իբրև օգնական։ Արտաքահմանեան հայ թերթեր կարդացողներին՝ չեմ կարծում անծանօթ լինի վերոյդրեալ վարդապետի գործունէութիւնը Տաճկաստանում։

—

Դավրէժի մեր թղթակիցը մեզ գրում է որ մինչև հիմայ „Կանանց ընկերութեան“ հանգանակած փողերը սրվանալների օգտին՝ ուղարկուած չէ ուր որ հարկն է։ Հաստատ աղբիւրներից լսում ենք, որ Սալմաստի տեսուչը աշխատում է, որ իւր տրամադրութեան տակ տրուի այդ փողերը, որ ինքը տանէ բաժանէ Սալմաստցիները եղող Աղբակցի գաղթականներին, որոնք ուզում են վերադառնալ։ Ի հարկէ անմաս չի մնայ և արտասահմանի գաղթականութիւնը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

9 օգոստոսի 1894

Շատ վաղուց այստեղ կանանց Բարեգործական ընկերութիւն է կազմուել, բայց կանոնավորութեան կողմից չէ հաստատուել, այսքան ուշնայլ մեղ կարծել է տալիս որ չի հաստատուել էլ։

Այստեղ նկել է մի Անգլո-ամերիկեան մեծ ցիրկ, և կամենում է ներկայացում տալ, սորա մարդկանցից մէկը „Մասիս“ շողենաւում խոլերայով վարակուած է եղել։ Նաւը արգիլուած է ափին մօտենալ։

Առաջիկայ տարուայ համար այստեղի դպրոցական հարցերը առ կախ են մնացել, դեռ հաս ոչինչ յայտնի չէ։

Բարեգործական ընկերութիւններին, ուսուցչական ցէնց ծեռք բերելու համար, որ օգնում էին կուրսեր բանալ, ապարդիւն անցան, կոյսվարութիւնը արգիլեց։

Էջմիածնից ուղարկուած, Սալմանի եպիսկոպոսի փոխանորդ Ս. Վ. Այվատեանը հասաւ Բաղու, անցեալ կիրակի մի լաւ քարոզ խօսեց „Սիրոյ և ընկերական ոգու“ մասին, քարոզը բաւական լաւ և ազդու էր, առաջիկայ կիւրակէ նոյնպէս պէտք է խօսէ։

Վարդապետը շուտով պէտք է ուղեւորուի դէպի Պարսկաստան։

Բ.

ՆԱՄԱԿ ԴԱՄԱՐԼՈՒԻՑ

(Երեւանայ գաւառ)

10 օգոստոսի 1894

Օգոստոսի 10-ին կարդալով „Շաւիղ“ լրագրի № 25. արտաքին տեսութեան մէջ, նամակ Կովկասից Կ. Կ. ստորագրութեամբ 5 յունիսի գրած յօդուածը, միանգամից զարմացրեց, թէ մեղ և թէ ուրիշ ընկերների։ Ի միջի այլոց այ. յօդուածագիրը գրում է այսպէս։ „Այս օրերս այստեղ վախճանուեց յայտնի հարուստ Ց. Զիթախեանցը, թաղումը շատ շքեղ էր։ ինչպէս սովոր ենք առ հասարակ միայն շքեղ կերպով թաղումներ անել։

Ոչ մի կտակ չէ թողել. այդպիսի մարդիկ, որ իրանց մեռնելուց յետոյ էլ ոչինչ չին նուիրում ազգին այլ հեւս ում վերայ յոյս ունենայ ազգը“։ Միանգամից զարմացրեց մեղ, նրա համար ենք ասում, որ դրանից 1—2 ամիս առաջ Կովկասեան թերթերում կարդում ենք որ „Հանդուցեալ Ց. Զիթախեանի ազգիկները իրանց հանգուցեալ հօր յիշատակին հետեւեալ նուէրներն են յանձնարարել՝ Թիֆլիսի 2-րդ գիմնազիային 1250 ռուբլի, որի տոկոսով մի թոշակաւոր աշակերտ պէտք է պահուի, Ներսիսեան դպրոցին 1000 ռ., սովետների օգտին 1000 ռ., Գայանեան օրիորդաց դպրոցին 500 ռ., հայ կանանց Բարեգործութեան ընկերութեանը 100 ռ., հայ բանիանների խնայողական դրամարկղին 300 ռ., Ինամեղարիանցկարի դպրոցին 300 ռ., Մարիա-կայսրուհու կոյսերի հոգաբարձութեան Կովկասի միւղին 200 ռ., բացի այդ գումարներից, խոստացուած է գրաբար կարդողների և դերձակների համքարութեան չքաւոր աղջկանց մարդու տալու համար՝ շարունակել տալ տարեկան 150-ական ռուբլի, յիշեալ երկու համքարութիւնների իւրաքանչիւրին ինչպէս հանգուցեալն ամեն տարի տալիս էր“։ Որի գրուածքին հաւատալ, սատանին՝ մէկ երկրորդի, այդ հարցը մնում է սուղուածեան կարօտ։

Կարդալով „Շաւիղ“ լրագրի № 25-ի առաջնորդողը, երկու շարաթուայ դադարման մասին, ինչ տխրեցինք մենք էլ. միայն նորից կը ցանկանք մեզ յաջողութիւն և խմբագրութեանդ երկար կեանք։ Ինչ արած. Թող կորչին վասակները.....։

Միքայէլ Բաբախանեանց

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Հիպոտային գործակալութիւնը հեռագրում է, որ ռուսաց կառավարութիւնը Թոյլատրել է պարսից դրանի մուտքը Ռուսաստանում։

Արտօնատէր—Հրատարակիչ
ԱՆԴԷԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ Ճ. Ռ. ՄԻԼԼԷՐ

Թարգմանութիւն անղլերէնից

Մամիկոն Մ. Գրիգորեանցի

Գիրքը բաղկացած է 3 հատորից.

Տպագրւում է առանձին առանձին.

Գինն է Պարսկաստանի համար 1 դրամ. արտասահմանի համար 25 կոպէկ։

Դիմել՝ Մամիկոն Մ. Գրիգորեանցին Թէհրան.

Զեռնոտ արժէքներով պատրաստեմ գեղեցիկ ՊԱՐՍԻՑ կամ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՀԻՆ, ՆՈՐ ՆԱՄԱԿԱԴՐՈՇՄՆԵՐ։ Խնդրում է վաճառողներից ուղարկել իւրեանց ՆՄՈՇՆԵՐԸ վերջնական արժէքը յայտնելով։ Պատատուածները ընդունելի չեն։

Դիմել՝ Հրանտ Յ. Մարիմեան. Դավրէժ

Ամեն տեսակ եւրոպական ճարեր կը գտնուին բժիշկ ԲԱԶԻԼԻ դեղատունը Լաղզար փողոցում Թէհրանում. տասնիրումանաչաւի եւ աւելի գնողի համար, սովորական արժէքից զիջում կը լինի։ Գիշեր ժամանակում եւս դեղատունը բաց է։